

ք. Երևան

19 մարտի 2020թ.

**«ԵՊՀ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգում» և «ԵՊՀ բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը» փաստաթղթում փոփոխություններ կատարելու մասին**

Ղեկավարվելով ԵՊՀ կանոնադրության 49-րդ կետի 4-րդ ենթակետով, ԵՊՀ գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով և հաշվի առնելով հարցման կարգով քվեարկության արդյունքները՝ ԵՊՀ գիտական խորհուրդը որոշում է.

1. «ԵՊՀ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ»-ից հանել 9-րդ կետը (Կուրսային աշխատանքի պատրաստումը և գնահատումը), «ԵՊՀ բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը» փաստաթղթից հանել 2.2.4. կետի՝ կուրսային աշխատանքին վերաբերող 1-ին դրույթը:
2. Դրանց փոխարեն նշված փաստաթղթերում ներմուծել «Երևանի պետական համալսարանի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի մասնագիտական դասընթացներում հետազոտական աշխատանքի կատարման կարգ»-ով նախատեսված դրույթները:
3. Առկա և հեռակա ուսուցմամբ բակալավրի պատրաստման կրթական ծրագրի բոլոր ուսումնական պլաններից հանել կուրսային աշխատանքները, իսկ կուրսային աշխատանքների համար նախատեսված և այժմ ազատված կրեդիտները բաշխել «ԵՊՀ դասախոսական կազմի ուսումնական և ուսումնամեթոդական բեռնվածության հաշվարկի նորմեր»-ի 7-րդ կետով նախատեսվող հետազոտական բաղադրիչ ունեցող մասնագիտական դասընթացների միջև:
4. Եթե ուսումնական պլանով նախատեսված կուրսային աշխատանքներն արդեն իրականացվել են, ապա այդ ուսումնական պլաններում ավելացվում են միայն հետազոտական բաղադրիչները՝ առանց կրեդիտներ ավելացնելու:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Գ. Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ